Ucom x AREVOD համագործակցության շրջանակներում խաղարկության իրականացման պայմաններ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Ucom x AREVOD համագործակցության շրջանակներում խաղարկության (այսուհետ՝ Խաղարկություն) իրականացման սույն պայմաններով (այսուհետ՝ Պայմաններ) սահմանվում են Խաղարկության անցկացման կարգը, պայմանները, սահմանափակումները:

1.2. Մասնակցելով Խաղարկությանը՝ Դուք հաստատում եք, որ ծանոթացել եք Պայմաններին և համաձայն եք դրանց:

1.3. Խաղարկությունը համարվում է մարքեթինգային միջոցառում:

1.4. Խաղարկությունն իրականացվում է «Յուքոմ» փակ բաժնետիրական ընկերության կողմից (այսուհետ՝ Կազմակերպիչ):

1.5. Խաղարկությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության տարածքում:

2. Խաղարկության մասնակիցներ

2.1. Խաղարկությանը կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող, 18 տարին լրացած Ֆիզիկական անձինք:

2.2. Կազմակերպչի աշխատակիցները և նրանց ընտանիքի անդամները չեն կարող մասնակցել Խաղարկությանը:

3. Խաղարկության անցկացման կարգը

3.1. Խաղարկությանը մասնակցելու համար անհրաժեշտ է 2025 թվականի օգոստոսի 5-ից 2025 թվականի օգոստոսի 7-ը (ներառյալ) ընկած ժամանակահատվածում՝

- բաժանորդագրվել Uplay ինստագրամյան էջին (follow),
- հավանել (like) ամրացված հրապարակումը (pinned post),
- մեկնաբանությունների դաշտում նշել այն անձին ում հետ ցանկանում են մասնակցել AREVOD փառատոնին :

3.2. Նույն օգտահաշվից Խաղարկությանը հնարավոր է մասնակցել **միայն 1 անգամ**:

3.3. Խաղարկությունը կամփոփվի օգոստոսի 8-ին Uplay-ի ինստագրամյան պաշտոնական էջում :

3.4. Խաղարկության հաղթողները կընտրվեն պատահականության սկզբունքով՝ Random.org առցանց հարթակի միջոցով:

3.5. Հաղթողների ընդհանուր թիվը սահմանվում է 25 հոգի: Յուրաքանչյուր հաղթող ստանում է AREVOD փառատոնի երկուական տոմս:

3.6. Խաղարկության արդյունքների ամփոփման արդյունքում հաղթող ճանաչված մասնակիցներին Uplay_Armenia-ի ինստագրամյան պաշտոնական էջից անհատապես կուղարկվեն հաղորդագրություններ՝ վերջիններիս հաղթող ճանաչված լինելու վերաբերյալ:Այնուհետև նույն պաշտոնական էջի միջոցով հաղորդագրությամբ կտրամադրվեն տոմսերը՝ QR կոդերի տեսքով :

3.7. Նվերը ենթակա չէ փոխարինման կամ փոխանակման գումարի հետ:

3.8. Կազմակերպչին իրավունք է վերապահվում փոփոխել Խաղարկության Պայմանները՝ հաշվի առնելով ստեղծված իրադարձությունները՝ դրա մասին նախապես տեղեկացնելով իր պաշտոնական կայքէջում և սոցիալական էջերում:

4. Խաղարկության անցկացման ժամկետները

4.1. Խաղարկությունն անց է կացվելու **2025 թվականի օգոստոսի 5-ից 2025 թվականի օգոստոսի 7-ը (ներառյալ)** ընկած ժամանակահատվածում:

4.2. Խաղարկության արդյունքների ամփոփման ժամկետների վերաբերյալ տեղեկությունը կտրամադրվի Պայմանների 3.3-րդ կետով սահմանված կարգով:

5. Նվերների ցանկը

5.1. Նվերների ցանկը հետևյալն է.

Ապրանքատեսակ	**Քանակ**
AREVOD փառատոնի երկուական տոմս	25

6. Կազմակերպչի տվյալները

«Յուքոմ» փակ բաժնետիրական ընկերություն,
գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Դավիթ Անհաղթի փող., շ. 8/4,
պաշտոնական կայքէջ՝ www.ucom.am
պաշտոնական սոցիալական էջեր՝
https://www.facebook.com/UcomArmenia
https://www.instagram.com/ucom_official
https://www.instagram.com/uplay_armenia/

հեռախոսահամար՝ +374 (11) 444 444